ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ՄԱՅԻՍԻ 20-22-Ը ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Սերժիկ Պետրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ուզբեկստանի Հանրապետություն (քաղաք Բուխարա), 2021թ. մայիսի 20-ից 22-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհուրդ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Մասնակցություն Ճանապարհաշինարարների միջազգային խորհրդի կողմից կազմակերպվող միջազգային ավտոարշավով նախատեսված Ուզբեկստանի Հանրապետության Բուխարա քաղաքում կազմակերպված համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

   1) Ուզբեկստանի տրանսպորտային համակարգի զարգացման ներկա վիճակն ու խնդիրները, մայրուղիների զարգացման հեռանկարները,

   2) միջազգային ավտոարշավների իրականացումը՝ որպես ճանապարհաշինարարների համագործակցության և ընկերական հարաբերությունների ամրապնդման գործիք,

   3) նորարարական տեխնոլոգիական լուծումներ և նյութեր ԱՊՀ Կենտրոնական Ասիայի հատվածի ճանապարհաշինարարության ոլորտում,

   4) բետոնե ճանապարհների կառուցման էկոլոգիական-տեխնոլոգիական առանձնահատկությունները և դրանց պահպանումը, գրունտի կայունացում և գրունտաբետոնների սառը վերականգնում,

   5) ճանապարհային ակտիվների կառավարման ծրագիրը,

   6) BETAMONT ընկերության ինտելեկտուալ տրանսպորտային ծրագրեր ԱՊՀ պետությունների համար,

   7) տրանսպորտային շինարարության նորարարական նյութեր և տեխնոլոգիաներ Ուզբեկստանի համար,

   8) ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցների, ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և վերանորոգման նորարարական տեխնոլոգիաները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպումներ են կայացել ավտոարշավի մասնակից պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհային ոլորտի ներկայացուցիչների հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել: Նախանական պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատաժողովի ընթացքում քննարկվող թեմաները կարևոր են ճանապարհաշինական ոլորտի զարգացման համար: Մանսավորապես համաժողովի ընթացքում ներկայացված նորարարական տեխնոլոգիաների կիրառման հնարավորության դեպքում կարող են նպաստել ոլորտի զարգացմանը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

26 մայիսի 2021թ.